

Ձեր ապաստանի հայցը

Տեղեկատվություն սահմանային ընթացակարգի վերաբերյալ

Ինչո՞ւ է տրվում այս բրոշյուրը

Դուք եկել եք Նիդերլանդներ որևէ օդանավակայանից կամ նավահանգստից: Դուք հիմա ցանկանում ես ապաստան խնդրել Նիդերլանդներում: Ապաստան տալ՝ նշանակում է, այլ երկրում ապահովել այն մարդկանց անվտանգությունը, ովքեր իրենց սեփական երկրում չեն կարող անվտանգ և պաշտպանված ապրել:


Ապաստանի հայց ներկայացնելու համար պաշտոնապես դիմում են Նիդերլանդների ղեկավարությանը՝ բնակության կարգավիճակ ստանալու հարցով, որն էլ անհրաժեշտ է Նիդերլանդներում բնակվելու իրավունք ունենալու համար: Ապաստանի դիմումով սկսվում է ապաստանի ընթացակարգը, որը իրավական մի գործընթաց է, ըստ որի Նիդերլանդների ղեկավարությունը քննարկում է կացության կարգավիճակ տալու հարցը:

Այս բրոշյուրում դու կարող ես կարդալ այն մասին, թե ինչ է տեղի ունենում ապաստանի ընթացակարգի ժամանակ: Կարդալով այն կիմանաս նաև, թե ինչ պետք է անել (քո պարտականությունների մասին) և ինչ կարող ես ակնկալել Նիդերլանդների ղեկավարությունից (քո իրավունքների մասին):

Քայլ 1. Ներկայանալը և գրանցվելը

Դուք դիմում եք Սահմանապահ ոստիկանությանը: Հիմնականում Թագավորական սահմանապահ ոստիկանությանը: Թագավորական սահմանապահ ոստիկանության աշխատակիցները ստուգում են ձեր անձնական տվյալները և գրանցում ձեր անունն ու ազգանունը, ծննդյան թիվն ու ամսաթիվը և ազգությունը: Նրանք խուզարկում են ձեր հագուստն ու իրերը, լուսանկարում են ձեզ և վերցնում ձեր մատնահետքերը: Տրվում է մի բրոշյուր ձեր մատնահետքերը վերցնելու պատճառի բացատրությամբ: Դուք ստորագրելու եք ձեր ապաստանի դիմումի փաստաթղթը:

Հնարավոր է նաև ձեզ հարցեր տրվեն ձեր ճամփորդական ուղու մասին, և թե դուք արդյոք նախկինում ապաստանի հայց ներկայացրել եք այստեղ կամ մեկ այլ եվրոպական երկրում: Կարող է նաև հարցեր տրվեն ձեր ընտանիքի անդամների՝ այստեղ կամ կամ մեկ այլ եվրոպական երկրում գտնվելու մասին:



Նիդերլանդների Փախստականների աջակցության կենտրոնը մարդու իրավունքների անկախ մի կազմակերպություն է և ստեղծված է փախստականների շահերը պաշտպանելու համար: Փախստականների աջակցության կենտրոնը ձեզ տեղեկություններ է տրամադրում և բացատրում ապաստանի գործընթացը, տեղեկացնում և օժանդակում է անձամբ ձեզ այս ընթացակարգի ժամանակ և միջնորդում այլ կազմակերպությունների հետ խնդիրներ ունենալիս: Կենտրոնը սերտ համագործակցում է ձեր փաստաբանի հետ: Փախստականների աջակցության կենտրոնը ձեր ապաստանի դիմումի վերաբերյալ որոշում չի կայացնում:

Արդյոք ունեք դուք փաստաթղթեր, որոնք կարող են ապացուցել ձեր ինքնությունը, ինչպիսիք են անձնագիրը, նույնականացման քարտը, ծննդյան վկայականը կամ վարորդական իրավունքի վկայականը: Կամ ունեք արդյոք փաստաթղթեր, որոնք կարող են հաստատել ձեր ճամփորդական ուղին և փախստականի ձեր պատմությունը, ինչպիսիք են ինքնաթիռի տոմսերը, նստեցման կտրոնը, դիպլոմներ, դատարանի վճիռներ կամ հողվածներ թերթերից: Այդ դեպքում ներկայացրեք այդ փաստաթղթերը գրանցման ժամանակ կամ փորձեք այդ փաստաթղթերը ձեռք բերել մինչև ձեր ապաստանի ընթացակարգի սկսվելը: Այս հարցում ձեզ կարող է օգնել Փախստականների աջակցության փակ կենտրոնի աշխատակիցը:

Ձեր փաստաթղթերի իսկությունը ստուգվում են Թագավորական սահմանային/գիմնական ոստիկանության մասնագետների կողմից: IND-ն օգտագործում է այս փաստաթղթերը ձեր ապաստանի դիմումի քննարկման ժամանակ:

Ուշադրություն: Ձեր անձնական տվյալները և ձեր փաստաթղթերը կարևոր են ձեր ապաստանի դիմումի քննարկման համար: Եղեք լիիրավ և ստուգեք, թե արդյոք ձեր տվյալները լիարժեք ու ճիշտ են գրառված: Երբեք դեմ մի նետեք ձեր անձնական փաստաթղթերը:


Նիդերլանդական իշխանությունը երբեք չի հայտնի ձեր երկրի պետական մարմիններին, որ դուք Նիդերլանդներում դիմել եք ապաստանի համար:

Քայլ 2. Ժամկետ հանգստի և նախապատրաստման համար

Ապաստանի ընթացակարգը չի սկսվում անմիջապես, երբ դուք ժամանում եք Նիդերլանդներ: Ձեզ տրվում վեց օր ժամանակ է ձեր ճամփորդությունից հետո հանգստանալու և նախապատրաստվելու համար, որն էլ կոչվում է հանգստի և նախապատրաստվելու ժամանակահատված: Ձեր փաստաբանի հետ քննարկելով՝ դուք կարող եք խնդրել IND-ին կրճատել այս ժամկետը:

Կացարան

Ձեր ներկայանալուց և գրանցվելուց հետո երկու ժամվա ընթացքում ձեզ կտանեն մի փակ կացարան՝ Մխիպիոլ օդանավակայանի մոտակայքում: Դուք այստեղ կմնաք ձեր ամբողջ սահմանային ընթացակարգի ժամանակ: Դուք խարվունք չունեք այս կացարանը ինքնուրույն լքել: Այս շենքում է գտնվում նաև Միգրացիայի և հպատակագրման ծառայության (IND) գրասենյակը:



Immigratie- en Naturalisatiedienst
Ministerie van Veiligheid en Justitie

Միգրացիայի և հպատակագրման ծառայությունը (IND)
Նիդերլանդների Արդարադատության և անվտանգության նախարարության բաժիններից մեկն է: IND-ի աշխատակիցները ձեզ հետ գրույցներ կվարեն ձեր ինքնության, ազգության, ճանապարհի և ձեր երկրից մեկնելու պատճառների վերաբերյալ: Նրանք հարցեր կտան ձեր անձնական անցյալի պատմությունից և ձեր երկրի իրավիճակից: Դրանից հետո նրանք որոշում են՝ արդյոք դուք կարող եք (ժամանակավորապես) մնալ Նիդերլանդներում, թե պետք է տեղափոխվեք մեկ այլ եվրոպական երկիր:

Թոքախտ հիվանդության հետազոտություն


Թոքախտը ծանր հիվանդություն է, որը շատ տարածված է աշխարհում և, հավանաբար, նաև այն երկրում, որտեղից դուք եք եկել: Թոքախտի բացիակիր ձևով հիվանդները կարող են մյուս մարդկանց վարակել, օրինակ՝ հագալու կամ փռշտալու միջոցով:

Բժշկական ծառայության կացարանների փակ կենտրոնի աշխատակիցը ձեզ այդ մասին կտա մի շարք հարցեր: Եթե կասկած առաջանա, որ դուք թոքախտով հիվանդ եք, ապա դուք կենթարկվեք թոքախտի լիակատար հետազոտության: Այս նպատակով ձեզ կփոխադրեն հիվանդանոց: Եթե դուք հիվանդ լինեք թոքախտով, ապա Նիդերլանդներում դուք կստանաք դեղորայքային բուժում: Այս դեպքում ապաստանի ընթացակարգը կսկսվի բուժումից հետո:

Լուսաբանում

Նիդերլանդների Փախստականների աջակցության կենտրոնի աշխատակիցը ձեզ կբացատրի և կտեղեկացնի ապաստանի ընթացակարգի մասին և բժշկական խորհուրդներ կտա ձեզ:

Փախստականների աջակցության կենտրոնի աշխատակիցները ձեզ տեղեկացնում և օժանդակում են նաև ձեր ապաստանի ընթացակարգի ժամանակ: Փախստականների աջակցության կենտրոնի ծառայությունները անվճար են: Ձեր տեղեկատվությունը գաղտնի կպահվի:



Կացարանում դուք հանդիպում կունենաք Ուտրեխտի դատական բժշկական ընկերության (FMMU) բուժաշխատակցի հետ: Այս աշխատակիցը կհարցնի ձեզ, թե արդյոք դուք կամենում եք մասնակցել բժշկական հետազոտության: Այս հետազոտությունը նապատակ ունի հաստատելու արդյոք դուք հոգեկան և/կամ ֆիզիկական խնդիրներ ունեք, որոնք կարող են ազդեցություն ունենալ IND-ի հետ տարվող ձեր գրույցների վրա:

Բժշկական խորհուրդ

Հարցազրույցի օրը բուժաշխատողը ձեզ կտա հարցեր: Անհրաժեշտության դեպքում բուժաշխատողը ձեզ կուղարկի բժշկի մոտ՝ մանրագնի հետազոտության համար: Բուժաշխատողը կամ բժիշկը IND-ին կփոխանցի հետազոտության արդյունքը: Դա տեղի կունենում միայն ձեր համաձայնության դեպքում, : Ձեր ապաստանի ընթացակարգի ժամանակ IND-ն հաշվի կառնի ձեր առողջական վիճակի մասին ստացած տեղեկությունը:


Կարևոր է, որ անկեղծ լինեք ձեր հնարավոր հոգեկան և մարմնական խնդիրների հարցում և դրանք պատմեք բուժաշխատողին կամ բժշկին: Եթե դուք սպիներ ունեք, ապա հարկավոր է, որ այդ մասին հայտնեք բուժաշխատողին: Բժշկական հետազոտության զեկուցագիրը գաղտնի է պահվում: Բժշկական նման հետազոտություն պարտադիր չէ և այն անվճար է:

Եթե դուք չեք կամենում մասնակցել բժշկական հետազոտությանը, ապա կարող եք այդ մասին հայտնել բուժաշխատակցին: Այդ դեպքում ձեր ապաստանի ընթացակարգի ժամանակ IND-ն կարող է հաշվի չառնել ձեր առողջական վիճակը:

Փաստաբանի օգնությունը

Ձեր ապաստանի ընթացակարգի ժամանակ դուք օգնություն եք ստանում փաստաբանից: Այս փաստաբանն անկախ է Նիդերլանդական պետական մարմիններից: Զրույցի ժամանակ փաստաբանը նախապատրաստում է ձեզ IND-ի հետ տարվող հարցազրույցների համար: Այս նախապատրաստական գրույցը ձեր փաստաբանի հետ տեղի է ունենում այն շենքում, որտեղ դուք մնում եք:

Ձեր փաստաբանի օգնության համար դուք կարիք չունեք վճարելու: Ձեր տեղեկությունը գաղտնի է պահվում:



Իրավական աջակցության խորհուրդը հոգ է տանում, որպեսզի դուք ստանաք փաստաբանի օգնություն, երբ դուք ինքներդ չեք կարող վճարել: Իրավական աջակցության խորհուրդը վարձատրում է այս փաստաբանին ձեզ ցուցաբերած օգնության համար: Փաստաբանը չի ծառայում Իրավական աջակցության խորհրդում: Փաստաբանը անկախ իրավական աջակցություն տրամադրող է, ով աջակցում է ձեզ ձեր ապաստանի ընթացակարգում:

Քայլ 3. ապաստանի ընթացակարգը օր առ օր

Հանգստի և նախապատրաստման ժամկետից հետո սկսվում է ապաստանի ընթացակարգը: Ապաստանի ընթացակարգը տեղի է գտնում այն շենքում, որտեղ դուք ապրում եք: Ձեր փաստաբանի հետ գրույցները նույնպես տեղի են ունենում այդ շենքում: Ձեր փաստաբանը և IND-ի աշխատակիցները աշխատասենյակներ ունեն այն շենքում, որտեղ ապրում եք նաև դուք:

Ստորև դուք կարող եք կարդալ, թե ինչպես է ընթանում ձեր ապաստանի ընթացակարգը օր առ օր:

Օր 1. առաջին հարցազրույց

IND-ի աշխատակցի հետ դուք պաշտոնական հարցազրույց եք ունենում ձեր ինքնության, ազգության, ճամփորդության ուղու վերաբերյալ: Այս գրույցը կոչվում է առաջին հարցազրույց: Այս գրույցի ժամանակ ձեզ դեռ հարցեր չեն տրվի ձեր ապաստանի հայցի պատճառների վերաբերյալ: Դա տեղի կունենա IND-ի աշխատակցի հետ մեկ այլ գրույցի ժամանակ (տես օր 3):

IND-ի աշխատակիցը ձեռք չառնալով մանրակրկիտ հարցեր կտա ձեր ինքնության, ազգության, ճանաչողական վերաբերյալ հստակ տվյալներ ստանալու համար, բայց նաև ստուգելու, թե դուք արդյոք ճիշտ եք ասում ամեն ինչ: Հնարավորինս լավ պատրաստվեք այդ հարցազրույցին: Դուք մեկ անգամ եք հնարավորություն ստանում հասկանալի և լիարժեք կերպով բացատրելու, թե դուք ով եք: Միշտ ներկայացրեք ձեր իսկական տվյալները և ոչ թե կեղծ (ճանաչողական) փաստաթղթերում նշված տվյալները: Եթե կեղծանում եք գործածել, դա նույնպես հայտնեք: Դա կարևոր է, քանի որ պետք է ստուգվի ձեր փաստաթղթերի և ձեր պատմության իսկությունը: Եթե IND-ն պարզի, որ ձեր ներկայացրած պատմությունը ճիշտ չէ, և ձեր փաստաթղթերը իսկական չեն, ապա դա կարող է բացասաբար ազդել ձեր ապաստանի դիմումի վրա: Եթե դուք կամենում եք, կարող եք խնդրել Փախստականների աջակցության կենտրոնին ներկա գտնվել ձեր առաջին հարցազրույցի ժամանակ: Փախստականների աջակցության կենտրոնը ձեզ կարող է նաև օգնել արտերկրից ձեր կարևոր փաստաթղթերը ուղարկելու հարցում:

IND-ի հետ հարցազրույցների ժամանակ ներկա է գտնվում մի թարգմանիչ: IND-ի աշխատակիցը հարցերը կտա հուլանդերեն: Թարգմանիչը կխոսի ձեր լեզվով: Թարգմանիչը ձեր պատասխանները կթարգմանի հուլանդերեն: Թարգմանիչն անկախ է և ձեր ապաստանի հայցի որոշման վրա ոչ մի ազդեցություն չունի: Եթե դուք և թարգմանիչը իրար լավ չկարողանաք հասկանալ, ապա հայտնեք այդ մասին: Այդ դեպքում IND-ի կողմից մեկ այլ թարգմանիչ կնշանակվի: Կարևոր է, որ թուր տեղեկություններ չգրանցվեն՝ հարցերը լավ չհասկանալու պատճառով: Եթե դուք ձեր ամուսնու/կնոջ կամ զուգընկերոջ հետ եք դիմում ներկայացրել ապաստանի համար, ապա դուք առանձին-առանձին կտաք հարցազրույց: Դուք (ձեր փաստաբանի միջոցով) կստանաք առաջին հարցազրույցի գեկուցագիրը:

Օր 2. Լայնածավալ (մեծ) հարցազրույցի նախապատրաստում
Ձեր փաստաբանը ձեզ հետ կքննարկի առաջին հարցազրույցի գեկուցագիրը, որի համար ձեր փաստաբանին աշխատասենյակ կտրամադրվի կացարանների փակ կենտրոնում: Այս հարցազրույցի ընթացքում թարգմանիչ կթարգմանի այն ամենն, ինչ կխոսեք ձեր փաստաբանի հետ: Եթե այդ գեկուցագրում որևէ բան չի գրվել կամ ճիշտ չէ գրանցվել, ապա ձեր փաստաբանը այդ մասին նամակով կ հայտնի IND-ին: Ձեր փաստաբանը ձեզ կնախապատրաստի IND-ի հետ կայանալիք երկրորդ հարցազրույցին:

Օր 3. Լայնածավալ (մեծ) հարցազրույց
IND-ի աշխատակցի հետ երկրորդ հարցազրույցը կոչվում է լայնածավալ (մեծ) հարցազրույց : Այս գրույցի ժամանակ դուք կարող եք պատմել ապաստանի հայցի ձեր ունեցած դրդապատճառների մասին: IND-ի աշխատակիցը հարցազրույցի ընթացքում ձեզ նաև հարցեր կտա:

Կարևոր է, որ դուք ասեք այն ամենը, որով կիմանալորեք, որ դուք պաշտպանության կարիք ունեք: Եղեք անկեղծ, ներկայացրեք

լիարժեք և հասկանալի կերպով, թե ինչ է ձեզ հետ կատարվել, և ինչու չեք կարող պաշտպանություն գտնել ձեր երկրում: Երբ դուք որևէ իրադարձություն հստակ չեք կարողանում մտաբերել, ապա այդ մասին հայտնեք IND-ի աշխատակցին: IND-ի աշխատակիցը տեղյակ է ձեր երկրի ընդհանուր իրավիճակին: Կարևոր է, որ դուք պատմեք ձեր իսկ վիճակի մասին՝ թե դուք անձամբ պաշտպանության կարիք ունեք: Պատմեք որքան հնարավոր է տեղին մանրամասներ: Եթե դուք սպիներ, ֆիզիկական կամ հոգեկան զանգատներ ունեք, որոնք կապված են ձեր ապաստանի դիմումի պատճառների հետ, ապա կարևոր է, որ այդ մասին ասեք IND-ի աշխատակցին: Այդ դեպքում IND-ն կարող է որոշել և առաջարկել ձեզ ենթարկելու դատաբժշկական հետազոտության, եթե IND-ն դա էական համարի ձեր դիմումի պատասխանի որոշման կայացման համար: Դուք կարող եք նման հետազոտություն կատարել նաև ձեր սեփական նախաձեռնությամբ և սեփական ծախսերով:

Այդ հարցազրույցի ժամանակ նույնպես թարգմանիչ է ներկա գտնվելու: Եթե դուք կամենաք, ապա կարող եք խնդրել Փախստականների աջակցության կենտրոնին լայնածավալ (մեծ) հարցազրույցի ժամանակ ներկա գտնվելու համար: Լայնածավալ հարցազրույցի գեկուցագիրը կտրվի ձեզ:

Օր 4. Լայնածավալ (մեծ) հարցազրույցի քննարկում
Ձեր փաստաբանը ձեզ հետ կքննարկի մանրագրին հարցազրույցի գեկուցագիրը: Այս գրույցի ժամանակ նույնպես թարգմանիչն օգնում է թարգմանելու այն ամենն, ինչ ասում եք դուք և փաստաբանը: Երբ գեկուցագրում որևէ բան բացակայում է կամ ճիշտ գրառված չէ, ապա ձեր փաստաբանը այդ մասին նամակով հայտնում է IND-ին:

Օր 5. Նախնական որոշում
IND-ն քննարկում է, թե արդյոք դուք բավարարում եք փախստականի կացության կարգավիճակի պայմաններին: Այս քննարկման արդյունքը որոշում է, թե հետագայում ինչպես կշարունակվի ձեր ապաստանի ընթացակարգը: Կա չորս հնարավորություն.

1. Դուք բավարարում եք փախստականի կացության կարգավիճակի պայմաններին: Դուք ստանում եք (փաստաբանի միջոցով) IND-ից նամակ, որում նշվում է, որ ձեր սահմանային ընթացակարգը ավարտվում է, և որ դուք Նիդերլանդներ մուտք գործելու իրավունք եք ստանում: Ձեր ապաստանի հայցը ձեր փաստաբանի հետ քննարկմամբ որքան հնարավոր է շուտափույթ կբավարարվի: Դուք իրավունք ունեք (ժամանակավորապես) բնակվելու Նիդերլանդներում: Ձեր փաստաբանը բացատրում է, թե ինչ հետևանքներ ունի այն ձեզ համար:
2. IND-ին ավելի շատ ժամանակ է հարկավոր քննության համար և այն չի կարող քսանութ օրվա ընթացքում որոշում կայացնել ձեր ապաստանի հայցի վերաբերյալ: Այդ դեպքում IND-ն կշարունակի քննարկել ձեր ապաստանի հայցը երկարացված ընթացակարգում: Այս ընթացակարգը տեղի կունենա որևէ (ազատ մուտքի) կացարանում: Ձեր ապաստանի

հայցի վերաբերյալ որոշումը կլինի ավելի ուշ: Դուք կստանաք մեկ այլ բրոշյուր ապաստանի երկարացված այս ընթացակարգի մասին:

3. IND-ն որոշում է կայացնում, որ դուք, հավանաբար, չեք բավարարի փախստականի կացության կարգավիճակի պայմաններին, սակայն ձեր ապաստանի դիմումը կշարունակվի քննարկվել ապաստանի ընդհանուր ընթացակարգում: Այս ընթացակարգը հիմնականում սկիզբ է դրվում մեկ շաբաթից որևէ (ազատ մուտքի) կացարանում: Դուք կստանաք մեկ այլ բրոշյուր ապաստանի այս ընդհանուր ընթացակարգի մասին:
4. IND-ն որոշում է կայացնում, որ դուք չեք բավարարում փախստականի կացության կարգավիճակի պայմաններին: Դուք ընթացակարգի ընթացքում (փաստաբանի միջոցով) նամակ եք ստանում IND-ից, որում նշվում է, որ IND-ն նախատեսել է (այսինքն՝ մտադիր է) մերժել ձեր ապաստանի հայցը: Այս նամակում գրված են նաև այս նախնական մերժման պատճառները և թե ինչ հետևանքներ ունի այն ձեզ համար: Ձեր փաստաբանը ձեզ հետ քննարկում է այս նամակը:

Օր 6. կարծիք

Եթե IND-ն նախատեսել է ձեր ապաստանի դիմումը մերժել, ապա դուք քննարկում եք այդ նախնական որոշումը փաստաբանի հետ: Ձեր փաստաբանն արդեն այս հարցին վերաբերող հանդիպումներ է նշանակել ձեզ հետ : Այնուհետև ձեր փաստաբանը կարող է IND-ին գրավոր կարծիք ուղարկել: Սա մի նամակ է, որով դուք պաշտոնապես արձագանքում եք IND-ի նախնական որոշմանը և կարող եք հայտնել, թե ինչու դուք համաձայն չեք դրա հետ:

Օր 7 և 8. որոշում

Ձեր արձագանքը (կարծիքը) ընթերցելուց հետո IND-ն քննարկում է, թե արդյոք պետք է նախնական որոշումը փոփոխել: Այս քննության արդյունքը կրկին որոշիչ է, թե ինչպես կշարունակվի ձեր ապաստանի ընթացակարգը: Դուք ստանում եք (փաստաբանի միջոցով) նամակ, որում IND-ն հայտնում է այս քննարկման արդյունքի մասին: Ձեր փաստաբանը բացատրում է, թե ինչ հետևանքներ ունի այն ձեզ համար: Կա չորս հնարավորություն.

1. Դուք բավարարում եք փախստականի կացության կարգավիճակի պայմաններին: Դուք ստանում եք (փաստաբանի միջոցով) IND-ից նամակ, որում նշվում է, որ ձեր սահմանային ընթացակարգը ավարտվում է, և որ դուք Նիդերլանդներ մուտք գործելու իրավունք եք ստանում: Ձեր ապաստանի հայցը ձեր փաստաբանի հետ քննարկմամբ որքան հնարավոր է արագ կբավարարվի: Այս դեպքում դուք իրավունք ունեք (ժամանակավորապես) բնակվելու Նիդերլանդներում: Ձեր փաստաբանը բացատրում է, թե ինչ այլ հետևանքներ ունի այն ձեզ համար:
2. IND-ին (այնուհանդերձ) ավելի շատ ժամանակ է հարկավոր քննության համար և այն չի կարող քսանութ օրվա ընթացքում որոշում կայացնել ձեր ապաստանի հայցի վերաբերյալ: Այդ դեպքում IND-ն կշարունակի քննարկել ձեր ապաստանի հայցը երկարացված ընթացակարգում: Այս ընթացակարգը տեղի կունենա որևէ (բաց) կացարանում: Ձեր ապաստանի հայցի

3. IND-ն որոշում է կայացնում, որ դուք, հավանաբար, չեք բավարարի փախստականի կացության կարգավիճակի պայմաններին, սակայն ձեր ապաստանի դիմումը կշարունակվի քննարկվել ապաստանի ընդհանուր ընթացակարգում: Այս ընթացակարգը տեղի կունենա որևէ (բաց) կացարանում: Դուք կստանաք մեկ այլ բրոշյուր ապաստանի այս ընդհանուր ընթացակարգի մասին:
4. IND-ն որոշում է կայացնում, որ դուք չեք բավարարում փախստականի կացության կարգավիճակի պայմաններին: Դուք (փաստաբանի միջոցով) սահմանային ընթացակարգի ընթացքում IND-ից ստանում եք նամակ (վճիռ), որում նշվում է, որ IND-ն մերժել է ձեր ապաստանի հայցը: Այդ նամակի հետ միասին տրվում է նաև մի առանձին տեղեկատվություն մերժման հետևանքների մասին, այն մասին, թե դուք ինչ կարող եք անել կայացված մերժման դեմ, որում նշված է նաև վերադարձի հնարավորությունների մասին: Որոշման մեջ գրված է նաև մերժման պատճառները և հետևանքների մասին: Ձեր փաստաբանը ձեր հետ միասին կքննարկի որոշումը:

Ուշադրություն: Վերևում բացատրվում է, որ ավարտական ընթացակարգը սկզբունքորեն տևում է ութ օր: Երբեմն IND-ն չի կարող որոշում կայացնել ութ օրում, օրինակ՝ քանի որ անհրաժեշտ է մանրագրին ուսումնասիրություն: Այդ պատճառով ժամկետը ութ օրից կարող է երկարաձգվել մինչև մաքսիմում քսանութ օր: Այսպիսով, որոշ դեպքերում IND-ն ավարտական ընթացակարգում կարող է լրացուցիչ ժամանակ հատկացնել ձեր ապաստանի դիմումի վերաբերյալ որոշում կայացնելու համար: Սահմանային ընթացակարգի ժամանակ շաբաթ, կիրակի և տոնական օրերը նույնպես աշխատանքային օրեր են:

IND-ն կփորձի, այնպես անել, որ իր ավարտին հասած ընթացակարգը որքան հնարավոր է կարճ տևի, որպեսզի դուք անհարկի չմնաք փակ կացարանում: Հենց պարզ դառնա, որ ձեր ապաստանի ընթացակարգը չի կարող քննարկվել ավարտական ընթացակարգում, այդ դեպքում այն կդադարեցվի: Ձեր դիմումը դրանից հետո կքննարկվի ապաստանի ընդհանուր ընթացակարգով կամ ապաստանի երկարացված ընթացակարգով:

Ի՞նչ կազմակերպությունների հետ կառնչվեք



Dienst Terugkeer en Vertrek
Ministerie van Veiligheid en Justitie

Վերադարձի և մեկնման ծառայությունը (DT&V)

Նիդերլանդների Անվտանգության և արդարադատության նախարարության բաժանմունքներից մեկն է: Երբ դու կացության կարգավիճակ չես ստանում, DT&V-ի աշխատակիցն օգնում է քեզ կազմակերպել քո վերադարձը դեպի հայրենիք:



Միգրացիայի միջազգային կազմակերպությունը (IOM)

մի անկախ կազմակերպություն է, որն աջակցում է աշխարհի զաղթականներին: IOM-ը կարող է օգնել, երբ որ դու ցանկանաս ինքնուրույն լքել Նիդերլանդները: IOM-ը տալիս է գործնական տեղեկություններ վերադարձի ու վերինտեգրման վերաբերյալ և ուղեկցում՝ Նիդերլանդներից մեկնումը կարգավորելու դեպքում: Այս հարցում օգնություն ստանալու համար կարող ես դիմել խնամակալիդ, Փախստականների աջակցության կենտրոնի աշխատակցին կամ քո փաստաբանին:



Dienst Justitiële Inrichtingen
Ministerie van Veiligheid en Justitie

Արդարադատության քրեակատարողական ծառայությունը

(DJI) Նիդերլանդների Արդարադատության և անվտանգության նախարարության բաժիններից մեկն է: Ավարտական ընթացակարգի ժամանակ դուք կմնաք ավարտական ընթացակարգի փակ օթևանում: Այն գտնվում է DJI-ի ղեկավարման ներքո:

Երբ կարող եք ստանալ փախստականի բնակության կարգավիճակ

Նիդերլանդների ,Օտարերկրացիների մասին օրենքում գրված է, թե որ պայմանների դեպքում կարող եք փախստականի բնակության կարգավիճակ ստանալ: Դուք կարող եք բնակության կարգավիճակ ստանալ, եթե հետևյալ պայմաններից մեկը վերաբերում է ձեզ.

- Դուք սարսափի հիմնավոր պատճառներ ունեք ձեր երկրում՝ ռասայի, կրոնի, ազգության, քաղաքական համոզմունքների պատճառով հետապնդվելու կամ որոշակի սոցիալական խմբի պատկանելության համար:
- Դուք ունեք ձեր երկրում սարսափի հիմնավոր պատճառներ՝ մահապատժի կամ էկզեկուցիայի, խոշտանգման կամ այլ անմարդկային կամ ստորացուցիչ վերաբերմունքի ենթարկվելու համար:
- Դուք ունեք սարսափի հիմնավոր պատճառներ, այն բանի համար, որ ձեր երկրում դուք գոհ եք դարձել կամայական բռնության՝ զինված ընդհարումների պատճառով:
- Ձեր ամուսինը կամ կինը, զուգընկերը, հայրը, մայրը կամ անչափահաս երեխան կարճ ժամանակ առաջ Նիդերլանդներում փախստականի բնակության կարգավիճակ ստացել են, թե ոչ:

Միգրացիայի և հպատակագրման ծառայությունը (IND) կորոշի, արդյոք դուք կարող եք փախստականի բնակության կարգավիճակ ստանալ, թե ոչ:

Ի՞նչ է ակնկալվում ձեզանից

Կարևոր է, որ դուք ընթացակարգի ժամանակ տաք բացատրություններ, որոնք հիմնավորում են ձեր ապաստանի դիմումի պատճառները: Ձեզնից ակնկալվում է նաև, որ ապացույցի բոլոր միջոցները, որոնք դուք ունեք կամ կարող եք ձեռք բերել (ինչպես օրինակ՝ ձեր փաստաթղթերը կամ նամակներ, որոնք սատարում են ձեր բացատրություններին), ցույց տաք IND-ին:

Եթե կան անձնական հանգամանքներ, որոնք պետք է IND-ն հաշվի առնի, ապա կարող եք դրանք ներկայացնել, որպեսզի, օրինակ՝ գրույցների կամ COA-ում ընդունելություն գտնելու ժամանակ հնարավոր լինի միջոցներ կիրառել: IND-ն փորձում է ձեզ հնարավորինս աջակցել:

Ձեր դիմումը ետ վերցնելը

Ցանկացած պահի դուք կարող եք ձեր դիմումը հետ վերցնել: Այս դեպքում խորհուրդ է տրվում կապ հաստատել փաստաբանի հետ կամ անմիջապես դիմել IND-ին: Եթե դուք հետ վերցնեք ձեր դիմումը, ապա, որպես հետևանք, դուք այլևս չեք կարող բնակվել Նիդերլանդներում, եթե, իհարկե, չունեք կացության իրավունք այլ հիմքերի շնորհիվ: Ապաստանի հայցից հրաժարվելու դեպքում էլ հնարավորություն ունեք նորից դիմել ապաստան ստանալու համար:

Ապաստանի ընթացակարգից հետո

Եթե IND-ն մերժում է ձեր ապաստանի դիմումը սահմանային ընթացակարգում, ապա դուք կարող եք ձեր փաստաբանի հետ խորհրդակցելով բողոքարկել այս որոշումը նիդերլանդական դատարանում: Դա նշանակում է, որ դուք պաշտոնապես հայտնում եք դատավորին, որ դուք IND-ի որոշման հետ համամիտ չեք: Դուք կարող եք նաև հայցադիմում ներկայացնել դատարան թույլտվություն խնդրել բողոքարկման ընթացակարգի ժամանակ մնալու Նիդերլանդներում: Այս բանում ձեզ կօգնի ձեր փաստաբանը:

Այնուհետև դատավորը քննում է, թե արդյոք IND-ն ճիշտ է կիրառել Նիդերլանդների օրենքը ձեր ներկայացրած ապաստանի դիմումի վերաբերյալ որոշում կայացնելիս: Շատ դեպքերում դուք իրավունք ունեք դատավորի վճռին սպասել Նիդերլանդներում:

Եթե IND-ն մերժում է ձեր ապաստանի դիմումը, ապա ձեզ կտեղափոխեն փակ կացարանի մեկ այլ բաժանմունք: Այստեղ դուք բնակվելու եք՝ սպասելով Նիդերլանդներից ձեր մեկնելուն: Ապաստանի հայցից հրաժարվելու դեպքում ձեր վրա կարող է դրվել այս երկիր մուտք գործելու արգելք/մուտքի արգելք: Այդ պատճառով դուք չեք կարող վերադառնալ կամ մնալ Եվրոպական մի շարք երկրներում: Ապաստանի հայցից հրաժարվելու դեպքում էլ հնարավորություն ունեք նորից դիմել ապաստան ստանալու համար, եթե նույնիսկ ձեր վրա դրված մուտքի արգելքը դեռ ուժի մեջ է:

Դուք ինքներդ եք պատասխանատվություն կրում ձեր երկիր վերադառնալու համար: Վերադարձի և մեկնման ծառայությունը (DT&V) օգնում է ձեզ ձեր մեկնումը կազմակերպելու հարցերում: IND-ի կողմից ձեր ապաստանի դիմումը մերժվելու դեպքում դուք կստանաք մեկ այլ բողոքարկ՝ ձեր երկիր վերադառնալու մասին տեղեկություններով:

Եթե դուք կամավոր եք ցանկանում վերադառնալ ձեր երկիր, ապա կարող եք կապ հաստատել Միգրացիայի միջազգային կազմակերպության հետ (IOM): IOM-ը կարող է ձեզ գործնական տեղեկություններ տրամադրել և աջակցել մեկնման հարցում: Դուք ապաստանի ընթացակարգի ավարտից հետո նույնպես կարող եք դիմել Փախստականների աջակցության կենտրոնին տեղեկատվություն և աջակցություն ստանալու համար:

Անձնական տվյալների մշակումը

Անձնական տվյալները ձեր անձին վերաբերող բոլոր տեսակի տեղեկություններն են: Ստորև գրված է այս գրքույկով զբաղվող բոլոր կազմակերպությունների անունները: Այդ կազմակերպությունները մշակում են ձեր անձնական տվյալները՝ ապաստանի հայցի, դիմումի կամ որևէ խնդրանքի դեպքում: Նրանք դիմում են ձեզ՝ իմանալու ձեր, ինչպես նաև այլ կազմակերպությունների կամ մարդկանց տվյալների մասին, եթե կա դրա անհրաժեշտությունը: Այս կազմակերպությունները օգտագործում և պահում են ձեր տվյալները և փոխանցում դրանք այլ կազմակերպությունների, եթե դա պահանջվում է ըստ օրենքի: Գաղտնիության օրենսդրության մեջ նշված է ձեր տվյալները մշակող կազմակերպություններին վերաբերող պարտավորությունների մասին: Օրինակ՝ նրանք պետք է ուշադիր և անվտանգ ձևով առնչվեն ձեր անձնական տվյալներին: Գաղտնիության օրենսդրության մեջ նշված է նաև ձեր իրավունքների մասին, օրինակ՝

- կազմակերպություններում թափանցել ձեր տվյալներին վերաբերող հարցերում;
- տեղեկանալ, թե կազմակերպությունները ինչու և ինչ նպատակով են օգտագործում ձեր տվյալները;
- տեղեկանալ, թե նրանք որ կազմակերպություններին են փոխանցել ձեր տվյալները:

Ցանկանում եք ավելի իմանալ ձեր անձնական տվյալների և իրավունքների մասին, ապա կարող եք թափանցել այդ կազմակերպությունների կայքերը: Այս գրքույկի ստորին մասում գրված է այդ կայքերի հասցեները:

Հաճախ տրվող հարցեր

Երբ կկայանա իմ առաջին հարցազրույցը IND-ի հետ

Ձեր դիմումը ներկայացնելուց հետո դուք վեց օր ժամանակ կունենաք ապաստանի ընթացակարգին պատրաստվելու համար: Եթե դուք հանգստի և նախապատրաստվելու համար ավելի կարճ ժամանակ եք ուզում, ապա դա կարող եք քննարկել ձեր փաստաբանի հետ և փոխանցել IND-ին: Դրանից հետո դուք կունենաք ձեր առաջին հարցազրույցը IND-ի հետ:

Որքան ժամանակ պետք է սպասել IND-ի որոշմանը

Վերևում բացատրվում է, որ ավարտական ընթացակարգը սկզբունքորեն տևում է ութ օր: Երբեմն IND-ն չի կարողանում որոշում կայացնել ութ օրվա ընթացքում, օրինակ՝ հայցի մանրամասն ուսումնասիրության պատճառով: Դրա համար էլ այդ ժամկետը կարող է որոշ դեպքերում ութ օրից մինչև մաքսիմում 28 օր դառնալ՝ ձեր ապաստանի հայցի վերաբերյալ որոշում կայացնելու համար: Ավարտական ընթացակարգի ժամանակ շաբաթ, կիրակի և տոնական օրերը նույնպես աշխատանքային օրեր են:

Հնարավոր է նաև, որ IND-ն որոշի ձեր ապաստանի հայցը քննարկել ապաստանի երկարացված ընթացակարգում: Այդ դեպքում, սկսած ձեր ապաստանի դիմումի ստորագրման պահից, առավելագույնը վեց ամիս է կտևի մինչև IND-ն կկայացնի որոշում ձեր ապաստանի հայցի վերաբերյալ: Այդ դեպքում կստանաք մեկ այլ բրոշյուր ապաստանի երկարացված ընթացակարգի վերաբերյալ:

Երբ IND-ն չկարողանա վեց ամսվա ընթացքում կայացնել իր որոշումը, ապա այդ մասին լուր կստանանք IND-ից: Ձեր ապաստանի հայցը ներկայացնելուց հետո վեց ամիսների ընթացքում IND-ից որոշում չստանալուց հետո դուք կարող եք նամակով IND-ից պահանջել, որ երկու շաբաթվա ընթացքում կայացնեն որոշում ձեր ապաստանի դիմումի հետ կապված:

Այս հարցում ձեզ կարող է օգնել ձեր փաստաբանը: Դրանից հետո ձեր փաստաբանի դիմումի հիման վրա դատավորը կվճռի, թե IND-ն պետք է տույժ վճարի չկայացրած որոշման յուրաքանչյուր օրվա համար:

Ես նախընտրում եմ հայցիս վերաբերող խնդիրները պատմել կին աշխատակցի: Գա հնարավոր է:

Նիդերլանդներում դուք չեք կարող հրաժարվել տղամարդկանց կամ կանանց հետ ամուսնային կյանքում առնչվելուց: Նիդերլանդների հասարակության տղամարդիկ և կանայք ունեն հավասար իրավունքներ, որն էլ մենք ակնկալում են ձեզանից: Սակայն եթե դուք ցանկանում եք IND-ի կին աշխատակցի հետ խոսել ձեր ապաստանի դիմումի պրոբլեմների մասին, ապա կարող եք այս մասին հայտնել առաջինհարգա գրույցի (IND-ի հետ հարցազրույցի) ժամանակ: Այդ դեպքում IND-ի աշխատակիցը կփորձի կին թարգմանիչ նշանակել լայնածավալ հարցազրույցի (երկրորդ հարցազրույցի) օրը: Եթե ուզում եք ձեր պատմությունը պատմել տղամարդ աշխատակցի, ապա կարող եք նաև այդ մասին հայտնել IND-ի աշխատակցին ձեր առաջին հարցազրույցի օրը: Այդ դեպքում IND-ի աշխատակիցը կփորձի տղամարդ թարգմանիչ և IND-ից տղամարդ աշխատակից նշանակել լայնածավալ հարցազրույցի (երկրորդ հարցազրույցի) օրվա համար:

Ի՞նչ պետք է անեն, եթե հիվանդ կամ հղի եմ

Եթե դուք հիվանդ եք կամ հղի եք, ապա այդ մասին տեղեկացրեք օդանավակայանի բժշկական ծառայության բուժաշխատողին բժշկական խորհրդի հետ կապված գրույցի ընթացքում (տես՝ Մինչ ձեր ապաստանի ընթացակարգի սկսվելը բրոշյուրը): Այդ բրոշյուրում կան մի շարք օգտակար խորհուրդներ: Սա շատ կարևոր է հատկապես այն դեպքում, երբ դուք այնպիսի վարակիչ հիվանդություն ունեք (կամ կարծում եք, որ ունեք), ինչպիսիք են օրինակ՝ թոքախտը, քոսը կամ հեպատիտ B-ն: Այն ամենն, ինչ դուք պատմում եք բուժաշխատողին, գաղտնի է պահվում: Բուժաշխատողն առանց ձեր թույլտվության երբեք այլ անձանց ձեր առողջության մասին տեղեկություններ չի հայտնի:

Եթե դուք հիվանդ լինեք ապաստանի ընթացակարգի

ժամանակ, ապա այդ մասին ասեք որևէ աշխատակցի, IND-ի կամ Փախստականների աջակցության կենտրոնի աշխատակիցներից մեկին: Նրանք կարող են օգնել ձեզ ստանալու համապատասխան (բժշկական) օգնություն: IND-ի կամ ձեր փաստաբանի հետ նշանակված հանդիպման օրը հիվանդ լինելու դեպքում դիմեք VWN-ի կամ անվտանգության բաժնի որևէ աշխատակցի, որպեսզի նրանք այդ մասին տեղեկացնեն ձեր փաստաբանին կամ IND-ին:

Ունե՞ք հարցեր այս բրոշյուրը կարդալուց հետո

Դուք կարող եք այդ հարցերն ուղղել ձեր փաստաբանին կամ COA-ի, IND-ի կամ Փախստականների աջակցության կենտրոնի աշխատակիցներից մեկին:

Որևէ բողոք ունե՞ք

Բոլոր կազմակերպությունները, որոնք ներգրավված են ապաստանի ընթացակարգում, փորձում են աշխատել պրոֆեսիոնալ և հոգատար: Սակայն եթե դուք գտնում եք, որ որևէ կազմակերպություն ձեր նկատմամբ ոչ ճիշտ վերաբերմունք է ցուցաբերել, ապա դուք կարող եք բողոքարկել: Նման հարցում ձեզ կարող է օգնել ձեր փաստաբանը կամ Փախստականների աջակցության կենտրոնի աշխատակիցներից մեկը:

Այս տեղեկատվությունը հեռուկալ կազմակերպությունների միասնական հրապարակումն է.
Centraal Orgaan opvang asielzoekers | www.coa.nl
Փախստականների ընդունելության կենտրոնական մարմին
Dienst Terugkeer en Vertrek | www.dienstterugkeerenvertrek.nl
Վերադարձի և մեկնման ծառայություն
Immigratie- en Naturalisatiedienst | www.ind.nl
Միգրացիայի և քաղաքացիության ծառայություն
Raad voor Rechtsbijstand | www.rvr.org
Իրավական աջակցության խորհուրդ
VluchtelingenWerk Nederland | www.vluchtelingenwerk.nl
Նիդերլանդների փախստականների աջակցության կենտրոն

Ministerie van Veiligheid en Justitie, directie Migratiebeleid
www.rijksoverheid.nl
Հրապարակվել է Արդարադատության և անվտանգության նախարարության միգրացիայի վարչության հանձնարարությամբ:

Այս հրատարակման բովանդակությունը չի կարող ձեզ իրավունքներ վերապահել: Եթե թարգմանությունը առաջացնում է մեկնաբանությունների տարբերություններ, ապա գործում է հղանդերեն տարբերակը: